ԽՆԴՐԵԼ, ՍՊԱՍԵԼ և ՍՏԱՆԱԼ

Խոստումից մինչև իրականացում՝ հավատքի ճանապարհը

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.24

Մինչև հիմա իմ անունով ոչինչ չեք խնդրել. խնդրե՛ք և պիտի ստանաք, որպեսզի ձեր ուրախությունը կատարյալ լինի:

1 Տիմոթեոս 2.5 – Մեկ է Աստված, և մեկ է Միջնորդը Աստծո և մարդկանց միջև՝ Հիսուս Քրիստոս:

- *Այս խոսքերի մեջ կա մի պարզ իրականություն. Կա "խնդրելը" և կա "ստանալը" – և այդ երկուսի միջև կա "սպասելու ժամանակը":*

  Ամենադժվար մասը՝ ***սպասելն է (ընթացքը)****:*

  «սպասումը» կարող է առաջացնել՝

  Շփոթություն, հուսահատություն, ցավ, նույնիսկ բարկություն Աստծո նկատմամբ:

Մարկոս 11.24 – Այն ամենը, ինչ <u>աղոթքով խնդրեք</u>, ***հավատացե՛ք****, որ կստանաք, ու դա կտրվի ձեզ:*

Հավատքը նշանակում է վստահել Աստծուն «սպասման» պահին:

Հավատքը չի գործում, երբ դու արդեն ստացել ես:

Հավատքը գործում է, երբ դու դեռ սպասում ես:

Ես ունեմ երկու կետ այսօրվա համար.

#1 ԱՌԱՋԻՆԸ՝ ՔՈ ՄԱՍԻՆ Է... ԽՆԴՐԵԼՆ ՈՒ ՍՊԱՍԵԼԸ

#2 ԵՐԿՐՈՐԴԸ՝ ԱՍՏԾՈ ՄԱՍԻՆ Է... ՊԱՏԱՍԽԱՆԸ

Աստված ավելի շատ հետաքրքրված է՝ ոչ թե ինչ ես ստանում, այլ ով ես դառնում ստանալու ճանապարհին:

1. Հովսեփի օրինակը

17 տարեկանում երազ տեսավ:

30 տարեկանում դարձավ Եգիպտոսի երկրորդ մարդը:

13 տարվա «ընթացք»:

- *Ի՞նչ կար այդ ընթացքի մեջ.*

  դավաճանություն – Ծննդոց 37.28

  սուտ մեղադրանք – Ծննդոց 39.17–20

  բանտ – Ծննդոց 39.20

  Մոռացված – Ծննդոց 40.23

- *Աստված պատրաստում էր Հովսեփին:*

- *Աստված օգտագործում է ընթացքը՝*

  քո բնավորությունը ձևավորելու համար

  քո հավատքը ուժեղացնելու համար

  քո սիրտը մաքրելու համար

  Լեոնարդ Ռեյվենհիլն ասաց.

  «Այսօրվա ծառայողները պատրաստվում են 3 տարի և քարոզում 30 տարի: Հիսուս պատրաստվեց 30 տարի և քարոզեց 3 տարի»:

Չինական բամբուկը, երբ տնկվում է, առաջին տարին չի աճում:

Երկրորդ տարին՝ ոչինչ: Երրորդ տարին՝ ոչինչ: Չորրորդ տարին՝ ոչինչ: Բայց հինգերորդ տարում այն կարող է աճել մինչև 25 մետր ընդամենը մի քանի շաբաթում:

Հարց.
Այն հինգերորդ տարում աճե՞ց, թե հինգ տարի շարունակ աճում էր արմատներով:

Սպասման տարիները կորուստ չէին:
Դրանք հիմք էին:

Դու կարող ես չտեսնել աճը:
Բայց դա չի նշանակում, որ աճ չկա:

Երբ դու խնդրում ես,
Աստված աշխատում է արմատների վրա:

Երբ դու սպասում ես,
Աստված խորացնում է հիմքը:

Երբ դու ստանում ես պատասխանը,
բոլորը տեսնում են պտուղը:

Բայց միայն դու և Աստված գիտեք արմատների պատմությունը:

Կա մի պարզ ճշմարտություն.

ԱՍՏՎԱԾ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ՎԵՐՋԸ, ԲԱՅՑ ՈՉ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Սաղմոս 105.19 (Հովսեփի մասին)

«Մինչև որ կատարվեց նրա խոսքը, Տիրոջ խոսքը փորձեց նրան»

Աստված ցույց տվեց երազը,

բայց ցույց չտվեց բանտը:

Որովհետև եթե Աստված ցույց տար ամբողջ ճանապարհը, շատերը կհրաժարվեին:

ՄԻ՛ ՀԱՄԱՐԻՐ ՈՒՇԱՑՈՒՄԸ ՄԵՐԺՈՒՄ

Հրեշտակը ասաց Դանիելին.

«Առաջին իսկ օրվանից, երբ աղոթեցիր, քո խոսքերը լսվեցին... բայց ես եկա 21 օր հետո»

Երկնքում պատասխանը տրվում է անմիջապես, իսկ երկրի վրա այն դրսևորվում է ժամանակի մեջ:

Ամբակում 2.3 – Որովհետև տեսիլքը դեռևս որոշված ժամանակի համար է և շտապում է դեպի վախճանը. չի ստում, եթե նույնիսկ հապաղի. սպասի՛ր նրան, որովհետև անպատճառ պիտի գա և չի ուշանա:

2. Աբրահամի օրինակը

Ծննդոց 12.2

Աստված խոստացավ որդի:

Ծննդոց 21.5

Աբրահամը 100 տարեկան էր, երբ Իսահակը ծնվեց:

25 տարվա սպասում:

Ինչո՞ւ: *Որ ոչ ոք չասի՝ դա մարդկային ուժով եղավ:*

Այն պիտի լիներ միայն Աստծուց:

ՀԻՇԻՐ ՍԱ. ԵՐԲ ԴՈՒ ԽՆԴՐՈՒՄ ԵՍ ՄԵԿ ԲԱՆ, ԱՍՏՎԱԾ ԱՆՈՒՄ Է 10,000 ԲԱՆ

Ինչ է կատարվում «սպասման, ընթացքի» մեջ

Աստված մաքրում է քո շարժառիթները

Աստված ամրացնում է քո հավատքը

Աստված պատրաստում է ճիշտ ժամանակը

Աստված պատրաստում է ճիշտ մարդկանց

Աստված պատրաստում է քեզ

Եսայի 40.31 – «Բայց նրանք, ովքեր սպասում են Տիրոջը, նոր ուժ կստանան»

Սպասելը նշանակում է՝

ոչ թե Աստված ոչինչ չի անում, այլ Աստված աշխատում է անտեսանելի ձևով:

Հիշիր այս ճշմարտությունը

Խնդրելը փոխում է քո իրավիճակը իսկ սպասելը փոխում է քեզ:

Հռ. 5.3–4 - Նեղությունը համբերություն է առաջացնում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս:

3. Հակոբի օրինակը

Ծննդոց 28.15

Աստված խոստացավ օրհնել նրան:

Բայց մինչև ստանալը, Հակոբը անցավ՝

Մենակություն

Խաբվածություն

պայքար Աստծո հետ – Ծննդոց 32.24

Եվ այդ պայքարում Աստված փոխեց նրա անունը:

խնդրե՛ք և պիտի ստանաք

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

«որպեսզի ձեր ուրախությունը կատարյալ լինի»

Այսօր դու կարող ես լինել երեք տեղերից մեկում.

1. *Դու պատրաստվում ես խնդրել*
2. *Դու սպասում ես*
3. *Կամ դու պատրաստվում ես ստանալ*

Գաղ. 6.9 – Չհոգնենք բարի գործ անելիս, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ